

ՅՈՐԵԼԵԱՆՆԵՐ

ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ 55-ԱՄԵԱԿ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎԱՐԳԱՊԵՏ ԱՂՈՅԵԱՆԻ

Ծնած է Հալէպ՝ 1940-ին: Նախնական կրթութիւնը ստացած է Հալէպի Սահակեան Ազգային Վարժարանին մէջ, որը ավարտած է 1956-ին և անմիջապէս անցած Երուսաղէմ՝ իբրեւ սան ժառանգաւորաց Վարժարանի, որուն ընթացքն ավարտած է 1960-ին և սարկաւագ ձեռնադրուած է Օգոստոս ամսուն: Անկէ ետք հետեւած է Ս. Աթոռոյս Ընծայարանի եռամեայ դասընթացներուն: 1963-ին ձեռնադրուած է կուսակրօն արեղայ, ձեռամբ օրուան Պատրիարք Տ. Եղիշէ Արք. Տէրտէրեանի:

1963-1968 տարիներուն եղած է Սրբոց Յակոբեանց Տպարանի Տեսուչ: Նոյն տարիներուն եղած է նաեւ Աստուածամօր Սուրբ Տաճարի տեսուչ:

Ապա մեկնած է Ամերիկա, եղած է հովիւ Գալիֆորնիոյ Սաքրամենթօ շրջանի հոգեւոր հովիւ և Առաջնորդարանի քարտուղար: Գալիֆորնիա գտնուած տարիներուն ուսանած է Գալիֆորնիոյ Համալսարանի մէջ:

Երեք տարի եղած է Տիթրոյթի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ:

1993-1999 տարիներուն հոգեւոր հովիւն էր Պէյսայտի Ս. Նահատակաց եկեղեցւոյ:

1999-էն ցայսօր յոբելեար Հայր Սուրբը Տեսուչն է Ս. Յարութեան Տաճարի:

2014-էն Վարիչն է Պատրիարքութեանս Ելեւմտից Տեսչութեան:

Իր բազմամեայ քահանայութեան ընթացքին Հայր Սուրբը երկար տարիներ եղած է ուսուցիչ Սբ. Թարգմանչաց Վարժարանի և ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի, ինչպէս նաեւ անդամ Տնօրէն Ժողովի:

Հակառակ իր վարած պատասխանատու և բազմազբաղ պաշտօններուն, Հայր Սամուէլ եղած է գրչի և ուսումնասիրութեանց մարդ և մեզի ձգած երեք աստուածաբանական թարգմանութիւններ և յօդուածներ:

«Սիրոն» յանուն Նորին Ամեն. Ս. Պատրիարք Հօր և բովանդակ Միաբանութեան, կը շնորհաւորէ Հոգեշնորհ Յոբելեարի Քահանայական Ձեռնադրութեան 55-ամեակը, և կը մաղթէ որ Աստուած օգնական ըլլայ և զօրացնէ անոր, պարգեւէ եկեղեցաշէն ձեռքբերումներով լեցուն քաջառողջ կեանքի երկար տարիներ՝ ի պայծառութիւն Առաքելահաստատ մեր Սուրբ Աթոռի:

ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ 40-ԱՄԵԱԿ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՀԱՅՐԻԿ ՎԱՐԳԱՊԵՏ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ

Ծնած է Երուսաղէմ՝ 1945-ին, Սեբաստացի ծնողքէ: Նախնական կրթութիւնը ստացած է Սբ. Թարգմանչաց Վարժարանին մէջ, որուն Նախակրթարանի ընթացքը ավարտած է 1959-ին: Ապա հետեւած է արհեստի: Կրօնաւորելու փափաքը ունեցած է կանուխէն, և դիմում կատարած է վանական իշխանութեան՝ 1977 Հոկտեմբեր 1-ին

ձեռնադրուած է սարկաւագ: 1978-ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ ձեռամբ օրուան Լուսարարապետ՝ Տ. Հայրիկ Արք. Ասլանեանի, որ իր անունով ընծայեալը վերակոչած է Տ. Հայրիկ Աբեղայ:

Յոբելեար Հայր Սուրբն իր քահանայութեան 40 տարիներու ընթացքին եղած է Աւագ Թարգման, Տեսուչ՝ Ս. Փրկչայ Վանքի: Կրցաց է յաջողցնել բազմաթիւ շինարարական աշխատանքներ՝ նորոգել տուած է Հայոց գերեզմանատունը, շինել տուած է վարդապետաց գերեզմանատունը և հանգստեան քարը: Երկար տարիներ Տեսուչն է Ս. Աստուածամօր Տաճարի:

«Սիոն» յանուն Նորին Ամեն. Ս. Պատրիարք Հօր և բովանդակ Միաբանութեան, սրտագինս կը շնորհաւորէ Հոգեշնորհ Յոբելեարի Քահանայական Ձեռնադրութեան Քառասնամեակը, և կը մաղթէ քաջառողջ կեանքի երկար օրեր:

ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ 40-ԱՄԵԱԿ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՎԱՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆԻ

Ծնած է Պոլիս, 20 Սեպտեմբեր, 1949-ին: Նախնական կրթութիւնը ստացած է Շիշլիի Ազգային վարժարանին մէջ, ապա անցած է Գարագիւղի Կեդրոնական՝ և ատեն մըն ալ Սամաթիոյ Սահակեան-Նունեան վարժարանը, որուն 10-րդ դասարանը աւարտելէ ետք մտած է զինուորական ծառայութեան: Ատեն մը նետուած է գործի ասպարէզ: 1974-ին եկած է Երուսաղէմ և հետեւած ժառանգաւորաց Վարժարանի և ապա Ընծայարանի դասընթացքներուն: Սարկաւագ ձեռնադրուած է 1977-ին, ձեռամբ՝ Տ. Շահէ Արք. Աճէմեանի: 1978-ին ձեռնադրուած է կուսակրօն արեղայ, ձեռամբ Արեւմտեան Եւրոպայի Կաթողիկոսական Պատուիրակ ու Փարիզի Հայոց Առաջնորդ Տ. Սերովբէ Արք. Մանուկեանի:

Յոբելեար Հայր Սուրբը իր քահանայագործութեան ընթացքին վարած է շարք մը կարեւոր պաշտօններ: Եղած է Ս. Աթոռոյս Աւագ Թարգման, փոխ-տեսուչ՝ Ս. Հրեշտակապետաց Վանքի, փոխ-տեսուչ՝ Ս. Յարութեան Տաճարի, Տեսուչ՝ Կիւլպէնկեան Մատենադարանի: Երկար տարիներ եղած է Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Ժամօրհնող: Այժմ Սրբոց Յակոբեանց Տպարանի և գրատան Տեսուչն է:

«Սիոն» Նորին Ամենապատուութեան և բովանդակ Միաբանութեան շնորհաւորանքը կը բերէ սիրելի Հայր Սուրբին անոր նուիրուած այս յարգանքին մէջ:

ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ 40-ԱՄԵԱԿ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԲԱԲԳԷՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆՈՒՇԵԱՆԻ

Ծնած է Պոլիս՝ 1958-ին: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի Ս. Մեսրոպեան Վարժարանին մէջ: 1970-ին եկած է Երուսաղէմ իբրեւ Տատուրեան սան և աշակերտած է Ս. Թարգմանչաց Վարժարանին: 1972-ին անցած է ժառանգաւորաց Վարժարան, որուն ընթացքը 1975-ին աւարտելէ ետք հետեւած է Ընծայարանի դասընթացքներուն: Ուրար ընդունած է 1976-ին, իսկ 1977-ի Մարտ 22-ին ձեռնադրուած է սարկաւագ՝ ձեռամբ Տ. Շահէ Արք. Աճէմեանի: 1978-ին ձեռնադրուած է կուսակրօն արեղայ, ձեռամբ Արեւմտեան Եւրոպայի Կաթողիկոսական Պատուիրակ ու Փարիզի Հայոց Առաջնորդ Տ. Սերովբէ Արք. Մանուկեանի: Ապա օրուան Պատրիարք՝ Տ. Եղիշէ Արք. Տէրտէրեան, Հայր Սուրբը ղրկած է Ամբրիկա ուսումը շարունակելու: 1983-ին աւարտած է Միշիկընի համալսարանի հոգեբանութեան բաժինը: Ապա շարունակելով